«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում

Հատատություն՝ Աբովյանի թիվ 5 մանկապարտեզ

Դաստիարակ՝ Եվգենյա Անանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1.1 Էքսկուրսիա՝ որպես նախադպրոցական տարիքի երեխաների կրթության ձև ----------5

1.2 Պատմական ակնարկ----------6

1.3 Էքսկուրսիայի կառուցվածքը----------7

1.4 Էքսկուրսիայի տեսակները----------8

Գլուխ 2. Մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում----------12

2.1 Թատրոնի դերը նախադպրոցական երեխայի կյանքում----------12

2.3 Էքսկուրսիաների և մշակույթային այցերի օրինակներ իմ աշխանտաքային փորձից----------13

Առաջարկություններ----------16

Եզրակացություն----------17

Գրականության ցանկ----------18

Ներածություն

Երեխաները բնությունից օժտված են հետաքրքրասիրությամբ: Նրանք սրտառուչ աշխուժություն են ցուցաբերում իրենց շրջապատող աշխարհի մասին տեղեկություններ ստանալիս: Բնական հետաքրքրասիրությունը նրանց առաջնորդում է դեպի արդյունավետ ուսումնասիրության: Դիտումների ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում ծանոթանալու և տեսնելու առարկան, երևույթը: Այդ ընթացքում ձևավորվում են իմացական գիտելիքներ: Անհրաժեշտ է երեխային սովորեցնել դիտել ծառերը, ծաղիկները, թփերը, նկատել տերևների առանձնահատկությունները, երանգները, գարնանը թաց բամբակի վրա աճեցրած ցորենի աճը: Բնության մեջ պետք է երեխաներին ցույց տալ ամեն ինչ՝ ծառ ու ծաղկից մինչև բնապատկեր, ամպերն ու աստղերը, արևն ու երկինքը, շրջակա միջավայրում գտնվող ամեն մի տարր, առարկա, մասնիկ և յուրանքանչյուրի զուգակցված կապը մեկը մյուսի հետ: Դիտումների ընթացքում երեխաները ձեռք են բերում համեմատելու, նկարագրելու, հաղորդակցվելու, դասակարգելու և չափումներ կատարելու կարողություններ: Այդ առումով բացառիկ է զբոսանքների և էքսկուրսիաների ընթացքում անցկացվող դիտումների, զրույցների դերը: Այս հետազոտական աշխանտանքիս մեջ անդրադարձել եմ էքսկուրսիաների և մշակույթային այցերի կարևորությանը :

Էքսկուրսիաները գործունեության հատուկ տեսակ են, որոնք հնարավորություն են տալիս երեխաներին ծանոթացնել բնական և մշակույթային վայրերին և մեծահասակների գործունեությանը բնական միջավայրում: Շատ մեծ է էքսկուրսիաների դերը, որոնք կարող են երիտասարդ սերնդին հնարավորություն տալ բարձրացնելու իրենց ինտելեկտուալ մակարդակը, զարգացնելու դիտողական հմտությունները և շրջապատող աշխարհի գեղեցկությունն ընկալելու կարողությունը, այսինքն՝ նպաստում են անհատի բազմակողմանի զարգացմանը: Էքսկուրսիաների և մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում չափազանց կարևոր են, քանի որ դրանք ուսումնադաստիարակչական

գործընթացում ապահովում են ուսուցման, զարգացման և դաստիարակման փոխադարձ կապը :

Ուսուցում. Էքսկուրսիաներն ու մշակույթային այցերը նպաստում են աշխարհընկալմանն ու ճանաչմանը, սաների միտքը հարստացնում են նոր տպավորություններով, քանի որ նրանք դիտում և ճանաչում են այնպիսի առարկաներ և երևույթներ , որը հնարավոր չէ տեսնել առօրյայում :

Բացի աշխարհընկալման զարգացումից էքսկուրսիաները մեծ նշանակություն ունեն խոսքի զարգացման գործում, քանի որ դրանք խթանում են հաղորդակցվելու ցանկությունը , կապակցված խոսքը, հարստացնում են բառապաշարը: Ռուս մանկավարժ Ուշինսկին գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե երեխան առարկայի մասին կոնկրետ պատկերացում ունի :

Դաստիարակում. Գործունեության այս ձևը նպաստում երեխաների հայրենասիրական, բարոյական դասիարակությանը, ձևավորում գեղագիտական զգացմունքները և հուզական արձագանք շրջապատի և դրանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ Էքսկուրսիաները ձևավորում են կարգապահություն, վարքի ճիշտ դրսևորումներ դրսում, դաստիարակի կարգադրություններին հետևելու և կատարելու ունակություն: Զարգացում. Բոլոր տեսակի էքսկուրսիաներն ակտիվացնում են սաների ուշա-դրությունը, դիտողականությունը, հիշողությունը, զգայական ունակությունները իսկ մշակույթային այցելությունները զարգացնում են երևակայությունը, ստեղծագործական միտքը , գեղագիտական ճաշակը , գեղեցիկը տեսնելու և գնահատելու կարողությունը:

Գլուխ 1

1.1 Էքսկուրսիա՝ որպես նախադպրոցական տարիքի երեխաների կրթության ձև

Նախադպրոցական տարիքը անհատականության ձևավորման ամենակարևոր շրջանն է, երբ դրվում են քաղաքացիական որակների նախադրյալները և զարգանում են պատկերացումները մարդու, հասարակության, մշակույթի և բնության մասին: Էքսկուրսիաները օգնում են երեխաների մեջ սերմանել բնական և մշակույթային արժեքների նկատմամբ հետաքրքրության և սիրո զգացում: Էքսկուրսիան մանկապարտեզում դաստիարակչական գործունեության կազմակերպման ձևերից է: Էքսկուրսիայի հիմնական նշանակությունն այն է, որ այն ապահովում է երեխաների մոտ կոնկրետ գաղափարների և տպավորությունների ձևավորմանը իրենց շրջապատող կյանքի վերաբերյալ: Համապատասխանությունը նոր չափորոշչի և ծրագրի պահանջներին. Ըստ նոր ծրագրային պահանջների՝ գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ պետք է լուծել սանի ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխանտանքային, տնտեսագիտական, իրավական, էկոլոգիական, սեռային, գեղարվեստագեղագիտական դաստիարակության խնդիրները և ըստ գործունեության ձևերի՝ այդ խնդիրներից շատերն իրականացվում են արտամանկապարտեզային պայմաններում: Եվ հենց այստեղ է, որ շատ մեծ ու կարևոր է էքսկուրսիաների, մշակույթային այցերի ընձեռած հնարավորությունները, քանի որ գործունեության այս ձևով ապահովվում է նոր չափորոշչի ոլորտային վերջնարդյունքներից շատերը և ձևավորում կարողունակությունները, հատկապես՝

- լեզվական և հաղորդակցական կարողունակությունը
- ճանաչողական և մոտիվացիոն կարողունակությունը
- մշակույթային կարողունակությունը
- ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակությունը
- ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- տնտեասական կարողունակություն
- ֆիզիկական կարողունակություն

1.2 Պատմական ակնարկ

Անրադառնալով պատմությանը՝ պարզվում է, որ էքսկուրսիաները ծագել են 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին: Որպես ուսուցման մեթոդ՝ նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների դիտորդական հմտությունների և ինքնուրույն աշխատանքի զարգացմանը: Դրանք կրթական գործընթաց են ներմուծված Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի առաջադեմ ուսուցիչների կողմից: Դեռևս 18-րդ դարում ֆրանսիացի փիլիսոփա Ժան - Ժակ Ռուսոն արտահայտել է այն միտքը, որ էքսկուրսիաները երեխաների մոտ զարգացնում են ստեղծագործական դիտողականությունը, հետաքրքրասիրությունը և անկախություն շրջապատող աշխարհը բացահայտելու հարցում: Էքսկուրսիայի ընթացքում կիրառվող հիմնական մեթոդը դիտումն է: Ըստ հոգեբանների՝ դիտումը բարդ գործունեություն է, որի հիմքը գիտակցված, նպատակային ընկալումն է: Դիտարկումը ձևավորվում է մարդու ողջ կյանքի ընթացքում և ներառում է մասերի և հատկությունների ընկալման ամբողջականությունը: Կախված կրթական նպատակների կոնկրետ բովանդակությունից, մշակվում է էքսկուրսիայի երթուղին, կառուցվածքը, որոշվում են մեթոդները: Նախադպրոցականների հետ էքսկուրսիաներ անցկացնելիս խնդիրն այն է, որ նրանց ուշադրությունը անհրաժեշտ է ուղղել և կենտրոնացնել ուսումնասիրվող կոնկրետ առարկայի վրա : Էքսկուրսիան մանկապարտեզում հետաքրքիր իրադարձություն է, որից երեխաները հաճույք են ստանում: Սա եզակի հնարավորություն է երեխաներին տարբեր միջավայրում ծանոթացնելու արվեստին, մասնագիտություններին և շրջապատող աշխարհին ու ձեռք բերելու նոր հետաքրքիր փորձառություններ: Էքսկուրսիաների ընթացքում նախադպրոցականները սկսում են ուսումնասիրել աշխարհն իր ողջ բազմազանությամբ և զարգացմամբ, դիտարկել երևույթների փոխկապակցվածությունը: Էքսկուրսիան պարզ ժամանց չէ, այն ինտելեկտուալ գործունեություն է ազատ և անմիջականորեն կազմակերպել ուսումնական ժամանակում, որը պահանջում է ֆիզիկական և հոգևոր ուժի որոշակի ծախս: Նախադպրոցական տարիքի երեխաների հետ ուղևորությունը դեպի անմիջական միջավայր հետաքրքիր և օգտակար մանկավարժական իրադարձություն է, որի

ընթացքում կրթական խնդիրների հետ միաժամանակ լուծվում են առողջական, ճանաչողական, բարոյական և էսթետիկ խնդիրները { 18 էջ. 196}:

1.3 Էքսկուրսիայի կառուցվածքը

- Ներածական զրույց

- Կոլեկտիվ դիտարկում

- Երեխաների անհատական անկախ դիտարկում

- Նյութերի հավաքածու

- Մանկական խաղեր հավաքված նյութերով

- Եզրափակիչ մաս, որի ընթացքում դասիարակը ամփոփում է էքսկուրսիան և հիշեցնում բնությունը հարգելու անհրաժեշտության մասին:

Էքսկուրսիա մշակելիս կարևոր է առաջ քաշել և լուծել ուսումնական, կրթական և զարգացնող առաջադրանքներ:
Դաստիարակը պետք է նախօրոք պատրաստվի էքսկուրսիային.

- Տեղանքի որոշում (որտե՞ղ, ինչո՞ւ)
- Թեմա
- Ընթացք

Անհրաժեշտ է մտածել ժամանակի մասին (ավագ խմբում ոչ ավել, քան մեկ ժամ): Անհրաժեշտության դեպքում վերցնել օգնական (դայակ, մեթոդիստ, ծնող): Էքսկուրսիա կազմակերպելիս և անցկացնելիս պետք է հիշել, որ նույնիսկ հետաքրքիր տեղեկատվության մեծ քանակությունը հանգեցնում է ուշադրության թուլացմանը: Էքսկուրսիան տարբեր խմբերում ունի իր տևողությունը. Միջին խմբում չպետք է գերազանցի 30 րոպե, ավագ խմբում՝ 40-50 րոպե: Էքսկուրսիան հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է պատրաստել բանաստեղծություններ, հանելուկներ, խաղային տեխնիկա և ապահովել հաճելի մթնոլորտ:

1.4 Էքսկուրսիաների տեսակները

Էքսկուրսիաները դասակարգվում են տարբեր հիմքերով:

1.Բովանդակությամբ. ըստ բովանդակության՝

Էքսկուրսիաները բաժանվում են տեսարժան վայրերի և թեմատիկ:

Թեմատիկ էքսկուրսիաները իրենց հերթին բաժանվում են հետևյալ խմբերի.

- Պատմական, որն ընդգրկում է տարածաշրջանի պատմության որոշակի ժամանակաշրջան.

- Ռազմապատմական, այսինքն, էքսկուրսիաներ ռազմական իրադարձությունների հիշարժան վայրեր և ռազմապատմական և հուշահամալիրային թանգարաններ:

- Արտադրական, որոնք բացահայտում են ձեռնարկության պատմություն, ցույց են տալիս նրա ձեռքբերումները, արտադրական գործընթացը:

- Գեղարվեստական էքսկուրսիաները պատմում են կոմպոզիտորների և արվեստագետների աշխատանքի մասին: Սրանք էքսկուրսիաներ են դեպի արվեստի պատկերասրահներ, ցուցասրահներ:

- Ճարտարապետական և քաղաքաշինական. ճարտարապետական հուշարձանների ցուցադրությամբ՝ ներկայացնելով քաղաքի հատակագիծն ու զարգացումը:

Բացի ներկայացված դասակարգումից, էքսկուրսիաները կարելի առանձնացնել լուծվող մանկավարժական խնդիրների բնույթով.

8

Բնության էքսկուրսիաներ. Բնությունը ճանաչելը հրաշալի գործընթաց է երեխայի միտքը, զգացմունքները զարգացնելու, ստեղծագործական ունակությունները խթանելու համար:
Բնությունն իր յուրօրինակությամբ, նորությամբ և բազմազանությամբ երեխաների մոտ առաջացնում է զարմանք, ուրախություն և բերկրանք , ավելին սովորելու ցանկություն և խրախուսում է նրանց փոխանցել զգացմունքները և մտքերը: Երեխաները հաճույքով դիտում են, համեմատում, եզրակացություններ անում, պատճառաբանում, պատմում և նկարագրում են տարրական բնական երևույթները: Բնության էքսկուրսիայի առավելությունն այն է, որ այն նախադպրոցականներին ծանոթացնում է բնական առարկաներին իրենց բնական միջավայրում: Նման զբոսանքները զարգացնում են մեզ շրջապատող աշխարհը ուսումնասիրելու ցանկությունը, երեխաների մեջ սերմանում են էսթետիկ զգացողություններ, բնության գեղեցկությունը տեսնելու և փայփայելու կարողությունը: Ինչպես հայ մեծ մանկավարժ Խ. Աբովյանն է նկատել «Բնությունն իր բազմապիսի առանձնահատկություններով ու երևույթներով, իր պես-պես գույներով ու ձայներով, դրանց միջև եղած պատճառահետևանքային զանազան կապերով, իր սքանչելի գեղեցկությամբ ու անկրկնելի ստեղծագործություններով ամենամեծ ուսուցիչն է: Այդ ուսուցիչն ամենահեշտ և դյուրին ձևով խոր ու կայուն կերպով սովորեցնում է ճանաչել բնությունը»: { 3}

9

Զբոսանք մանկապարտեզում. Թերևս առաջին էքսկուրսիան, որն առաջարկվում է նախադպրոցականներին սովորաբար (կրտսեր առաջին և երկրորդ խմբի սաներին) շրջագայությունն է նրանց մանկապարտեզի տարածքում: Այս էքսկուրսիան սաներին սովորեցնում է կողմնորոշվել տարածքում, ծանոթացնում է հաստատության կառուցվածքին, դրական վերաբերմունք է զարգացնում աշխատողների նկատմամբ: Սրանք նաև էքսկուրսիաներ են բացօթյա հանգստով:

Արտադրական էքսկուրսիա. Արտադրական էքսկուրսիաները սաների մոտ զարգացնում են հետաքրքրություն տարբեր մասնագիտությունների նկատմամբ, խթանում հարգալից վերաբերմունք գործարանների և այլ հաստատությունների աշխատողների աշխատանքի նկատմամբ: Նախադպրոցականները տեսնում ու ծանոթանում են արտադրական գործընթացին և արտադրանքի որակին: Սաները հասկանում են, որ այս ամենի համար մեծ պատասխանատվություն է կրում արտադրողը: Այսպիսի էքսկուրսիաները ունեն նաև հայրենասիրական նշանակություն, երեխաները սկսում են հպարտությամբ խոսել իրենց երկրի և քաղաքի մասին:

Էքսկուրսիաների կազմակերպման և անցկացման մեթոդներին ներկայացվող պահանջները

1. Բովանդակության համապատասխանությունը երեխաների տարիքին, հետաքրքրություններին և առանձնահատկություններին:

2. Որոշել երեխաների թիվը:

3. Էքսկուրսիան չպետք է նման լինի ավանդական պարապմունքներին:

4. Դաստիարակի նախապատրաստում:

5. Նախապես սահմանել այն խոսքի ձևերը, որոնք համախմբվելու կամ առաջարկվելու են առաջին անգամ:

6. Էքսկուրսիայից հետո առաջարկել երեխաներին կիսվել տպավորություններով:

Գլուխ 2.Մշակույթային այցերի դերը սաների զարգացման գործում

Բացի էքսկուրսիաներից սաների զարգացման գործում շատ կարևոր են նաև մշակույթային այցերը: Մշակույթը ներառում է մարդու ողջ ստեղծագործական գործունեությունը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ամբողջությունը: Այս գործունեության արդյունքը՝ վերցված թե՛ իր բարձրագույն դրսևորմամբ՝ արվեստով , և թե՛ ներառյալ այն ամենը , ինչ ստեղված է մարդու ձեռքով: Ժամանակակից պայմաններում արդիական նախադպրոցական երեխայի ներգրավածությունը մշակույթի յուրացման գործընթացում, որն ունի կրթության հոգևոր, բարոյական և բնապահպանական խնդիրները հաղթահարելու հսկայական ներուժ: Հենց այս տարիքային շրջանն է, ինչպես ցույց են տալիս գիտական հետազոտությունները, ամենազգայունը, որ երեխային իր ժողովրդի, իր երկրի մշակույթին ծանոթացնելու համար ամենանարդյունավետն է: Որպեսզի երեխան հստակ պատկերացում ունենա իր երկրի մշակույթի մասին, ապա շատ կարևոր է նրան ընդգրկել մշակույթային գործունեության մեջ. այցելություն թատրոն, թանգարաններ, գրադարաններ և այլն:

2.1 Թատրոնի դերը նախադպրոցական երեխայի կյանքում

Թատերական արվեստն ինքնին միջառարկայական կապերի, երեխաների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման նպատակի գործնական իրականացման առումով ընձեռում է լայն հնարավություն: Ի վերջո, թատրոնը համադրական արվեստ է: Այն ձևավորում է և՛ երգելու, և՛ ասմունքելու, և՛ պարելու, և՛ հորինելու, և՛ նմանակելու հմտություններ, մշակում խոսքի կուլտուրա:

Թատրոնը երեխայի կյանքին միախառնված մեծ խաղ է: Թատրոնի բեմում ներկայացվող հեքիաթն ավելի մոտ է, հասանելի և մատչելի, քան կարդացած գիրքը: Բանն այն է, որ թատրոնը հանդիսատեսին առաջարկում է լսողական և տեսողական պատկերներ և ազդեցության առումով այն չունի իր հավասարը: Այսօր մանկական թատրոնը բազմազան է՝ տիկնիկային թատրոն, սեղանային, մատնային, ստվերային, թատրոն՝ ձեռքերի վրա, թատրոն՝ ափսեների վրա, մնջախաղ, որոնք իրենց ուրույն ազդեցությունն են ունենում սաների զարգացման գործում:

Էքսկուրսիաների և մշակույթային այցերի օրինակներ իմ աշխատանքային փորձից

Օրինակ 1.

Թեմա՝ « Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ»

Խումբ՝ միջին

Նպատակը՝ ճշտել և ամրապնդել երեխաների պատկերացումներն աշնան մասին: Սովորեցնել նկատել աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունները (կենդանական և բուսական աշխարհում): Նկատել աշնանային բնության գեղեցկությունը: Առաջացնել ուրախ տրամադրություն և բնությունը պաշտպանելու ցանկություն:

Հիմնական մաս: Քանի որ պուրակը մոտ էր, կարճ ժամանակ անց արդեն պուրակում էինք, որտեղ դաստիարակը երեխաների ուշադրությունը հրավիրեց պուրակում տեղի ունեցած փոփոխությունների վրա, այնուհետև երեխաների հետ միասին արտասանեցին աշնան մասին սովորած բանաստեղծություններից մեկը: Էքսկուրսիայի ընթացքում դաստիարակը երեխաներին ուղղեց հետևյալ հարցերը.

1. Տարվա ո՞ր եղանակն է:

2. Որո՞նք են աշնան ամիսները:

3. Ինչպիսի՞ փոփոխություններ են լինում աշնանը:

4. Ի՞նչ տեսք է ստացել պուրակը:

Յուրաքնչյուր հարցին երեխաները տվեցին սպառիչ պատասխան: Այնուհետև երեխաները պուրակում հավաքեցին գեղեցիկ տերևներ խմբասենյակը զարդարելու և ապլիկացիոն աշխատանքների համար: Էքսկուրսիան ավարտվեց աշնան մասին գեղեցիկ երգով:

Ամփոփիչ մաս: Վերադառնալով խումբ՝ դաստիարակն ու սաները վերլուծեցին էքսկուրսիան: Երեխաները ազատ արտահայտեցին իրենց ստացած տպավորությունները:

Օրինակ 2

Թեմա՝ « Էքսկուրսիա դեպի կենդանաբանական այգի»

Խումբ՝ միջին

Նպատակը՝ ամրապնդել կենդանիների մասին երեխաների ստացած գիտելիքները : Ունենալ գեղեցիկ, հաճելի օր:

Նախապատրաստական մաս: Նախօրոք դաստիարակը երեխաներին տեղեկացրել էր, որ գնալու են կենդանաբանական այգի և մոտիկից կտեսնեն արդեն իրենց ծանոթ կենդանիներին:

Հիմնական մաս: Ամբողջ ճանապարհին երեխաները մեծ հուզմունքով և ան-համբերությամբ էին սպասում, թե երբ էին հասնելու տեղ: Որպեսզի ճանապարհը է՛լ ավելի հետաքրքիր լինի, դաստիարակը երեխաներին առաջարկեց հանելուկներ կենդանիների մասին: Զբոսանքի ժամանակ, յուրաքանչյուր կենդանու մոտ կանգնելիս, կրկին վերհիշեցինք անցած թեմաները: Երեխաները մեծ ոգևորությամբ պատմեցին այն ամենը, ինչը գիտեին սողունների մասին:

Ամփոփիչ մաս: Էքսկուրսիան ավարտվեց, երեխաները տուն վերադարձան ուրախ տրամադրությամբ և հաճելի տպավորություններով:

Ես կազմակերպում եմ այցելություններ դեպի թատրոն՝ մանկական հետաքրքիր ներկայացումներ դիտելու:
Կարծում եմ գործունեության այս ձևը թերևս ոչ հաճախակի է կիրառելի, բայց շատ կարևոր է: Եթե ոչ ամեն օր, ապա հաճախակի կարելի կազմակերպել զանազան էքսկուրսիաներ՝ բնության գիրկ, գրադարան, թատրոն, քաղաքի տեսարժան վայրեր և այլն, որոնք երեխաների համար կդառնան հիշարժան իրադարձություններ:

Չէ՞ որ այն սովորական առօրյայի համեմատությամբ բերում է բազմազանություն՝ տալով և՛ գիտելիքներ, և՛ տպավորություններ:

Առաջարկություն: Ավագ խմբում երեխաների համար կցանկանայի կազմակերպել էքսկուրսիա դեպի արվեստի որևէ տուն - թանգարան, որտեղ երեխաները կծանոթանային խեցեգործության տեխնիկային և տեսակներին: Քանի որ տարիքային բոլոր խմբերում (կրտսեր 1-ին, կրտսեր 2-րդ, միջին, ավագ) կան հացին վերաբերող թեմաներ, ուստի կառաջարկեի էքսկուրիա որևէ գյուղական միջավայր, որտեղ մինչ այսօր էլ խմորը պատարաստում են ձեռքով ու հացը թխում են թոնիրում կամ փռում:

Եզրակացություն

Վերը նշված նյութերի ուսումնասիրությունից և իմ անձնական փորձից ելնելով՝ եկա հետևյալ եզրակացության.

-Մանկապարտեզից դուրս երեխաների հետ աշխատելը, նպատակային այցերը մշակույթային կենտրոններ շատ կարևոր են: Այդ ընթացքում երեխաները դառնում են համախմբված, հանդուրժող և ամենակարևորը պատրաստ են միմյանց օգնել:

- Էքսկուրսիայի էությունը կայանում է ոչ միայն բացատրության, այլ նաև ցուցադրության մեջ: Եթե երեխան տվյալ թեմայի մասին ոչ միայն լսում է, այլ նաև տեսնում է, ապա տվյալ թեման ավելի լավ է տպավորվում երեխայի հիշողության մեջ:

- Իսկ բնության գիրկ էքսկուրսիաները երեխաներին հնարավորություն են տալիս իրեն զգալ բնության մի մասնիկը: Այն ավելի է ամրապնդում երեխա – բնություն կապը:

- էքսկուրսիաների ընթացքում երեխան քաղում է անհրաժեշտ տեղեկատվություն իրեն շրջապատող աշխարհի մասին: Ամեն անգամ էքսկուրսիաների ժամանակ, երբ երեխան խաղում է հետազոտողի դերը, նա ձեռք է բերում նոր գիտելիքներ, որոնք հետագայում իրեն շատ կօգնեն :

- Թատրոններ, թանգարաններ այցելությունները նպաստում են երեխաների գեղագիտական ճաշակի, երևակայության, ստեղծագործական մտքի զարգացմանը:

Գրականության ցանկ

1.ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ ԽՄԲԻ (4 -5 տարեկանների) ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ

2. Հ. ՄԻՏՈՅԱՆ, Լ. ՍՄԲԱՏՅԱՆ, Լ. ՍԱՐԳՍՅԱՆ Ուս. մեթոդական ձեռնարկ << ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՄԻՋԻՆ ԽՄԲՈՒՄ>> 2013

3. Լ. ՍՄԲԱՏՅԱՆ << ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԸ ԹԱՏՐՈՆԻ ԿԱԽԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ>>

4.M. ЗАЦЕПИНА << КУЛЬТУРНО-ДОСУГОВАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ В ДЕТСКОМ САДУ>>

5. INFOUROK.RU << РОЛЬ ЭКСКУРСИИ В РАЗВИТИИ ЛИЧНОСТИ РЕБЕНКА>>

6. ԷԴԻԹ ՊՐԻՆՏ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ